

DIRECTION  
Du Journal Arménien  
DZAGHIK  
14, Sultan Hamam  
LIBRAIRIE BAGDADLIAN  
CONSTANTINOPLE

# ԺԱՂԻԿ

ՃԱՐԱԹԱԹԵՐ

Ազգային, Քաղաքական, Գրական, Գիտական Եւայլն :

در علیه ده سلطان حامنده  
۱۴ نومرسولی بندادیان کتبخانه سنه  
» زاغیک »

غزه می اداره سنه

Ժ. Տարի, Թիւ 2

ՀՅԱԲԱԹ

19/31 Յուլիս 1897.

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Ծաղիկի բաժանորդագինն է Տարեկան՝ Պոլ Եթէ Ծաղիկի հրատարակութիւնը ո՞ր եւ է արգելի հանդիպի։  
սոյ համար 40, Գաւառներու համար 50 դահ. : Վեցամսեայ Պոլ Հանրօգուտ հիւթերու վերաբերեալ յօպուածներ եւ բորբակցու-  
սոյ համար 25, Գաւառաց համար 30 դահ. : Հարց 30 փառայ : Եթիւններ ընտիմակարութեամբ կ'ընդունուին։ Զավուած ձեռագիրնե-  
Բաժանորդագրութիւնը թիւի վրայ է, տարեկան բաժանորդներ պի-  
սի ստանան 52 եւ վեցամսեայները 26 թիւ Ծաղիկի։ Պաշտամեան լինչ պէտք է ուղղել Պահ-  
Պատուան յանձն կ'առնէ հատուցանել բաժանորդներուն վնասները, ՀԱՍՑ. — Ծաղիկի վերաբերեալ ամէն լինչ պէտք է ուղղել Պահ-  
Պատուան յանձն կ'առնէ հատուցանել բաժանորդներուն վնասները, Պոլիս, Սուլթան Համար, թիւ 14։

## ԱՌԱՋԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ

Երբ Ազամ ու Եւայ երկրային դրախտէն արտաքսե-  
ցան, հոն գտնուող բոլոր կենդանիք աստ անդ ցրուեցան։

Օձը սողոսկեցաւ մորենիներու տակ եւ աներեւոյթ  
եղաւ. խոյերը, ոչխարները, եղնիկը հեռացան սոսկ-  
մամբ, վայրենի ցուլը կարծես նախազզաց լուծը եւ ան-  
ցաւ պոռոչալով։

Ձին աւելի երկյոս՝ արշաւեց արագօրէն։

Առիւծը նայուածքով մը արհամարհեց անկեալ մար-  
դը, Վաղը, գայլը բոլոր վայրենի զաղանները պահ մի  
կանդ առին, կրծեցին ատամունքնին, յետոյ զիմեցին  
ուրիշ որսերու։

Արդէն արծիւն ու անդդ յարձակած էին աղաւնինե-  
րու վրայ։

Մթին ամպերէն իջած արեան կաթիլ մը խառնուե-  
ցաւ Եւայի արցունքներուն։

Այն ատեն Ազամ դառնութեամբ ըսաւ Եւային։ հ-  
րէկ այս կենդանիները մեղի հպատակած էին եւ զմեղ  
կը սիրէին, այժմ շատերը կը հեռանան սոսկմամբ եւ ու-  
րիչները սպառնալ իսկ կը համարձակին։ Ստեղծագոր-  
ծութեան բոլոր էակները մեղի թշնամացած են։ Մարզը  
տակաւին կը խօսէր երբ զգաց իւր ձեռաց լիզուիլը եւ  
տեսաւ շունը իւր ոտներուն տակ. խեղճ կենդանին քայլ  
առ քայլ հետեւած էր իրեն, կարծես իւր տիրոջ վշտին  
մասնակից ըլլալ կուզէր. աչքերը թրջած էին, կ'ար-  
տասուէր շունը։

Ազամ ձեռքը անոր զլխուն վրայ դրաւ. Եւայ սրբեց  
արցունքները եւ գգուեց զայն. շունը ցոյց տուաւ իւր  
հնազանդութիւնը եւ երախտագիտութիւնը, ելաւ ցատ-  
կեց հաշեց ուրախութեամբ, կրկին գլորտկեցաւ Ազամայ  
եւ Եւայի ոտից առջեւ եւ յառեց անոնց վրայ իւր հա-  
մարձակ եւ հաւատարիմ նայուածքը։

Այն ատեն Ազամ բոլորովին յուզեալ ըսաւ։

«Յաւականը ամէն ինչ մեղմէ առած չէ, ըստ  
որում մեղի կը թողու մի բարեկամ։»

Այսպէս առաջին օրէն շունը կոչուեցաւ տուաջին  
բարեկամ մարդուն։

\* \* \*

Կայէն եւ Արէլ երիտասարդներ եղած էին.

Թանձրախիտ ծառի մը շուքին տակ կը քնանար Ա-  
զամ առաւատեան աշխատութենէն յոգնած. Եւայ նստած  
անոր քով կը մանէր լոռութեամբ, շունը պառկած էր ա-  
նոնց ոտքերուն առջեւ։

Յանկարծ կենդանին ցատկեց, ակսաւ ողբագին ոռ-  
նալ, Ազամ արթեցաւ դողահար, երբեք իւր հաւատարիմ  
շանը նմանորնեակ ոռնաւ ըս լսած չէր։

Վայրին գառանաց մօտենալը յայտնելու համար  
բնաւ այտուն չը հայեր մասարներն արածելու տարած  
ժամանակ աչ այսպէս չը հաչեր, անտառաց մէջ երէ  
որսալու ատեն խոկ արագէս չը հաչեր։ Եւ սակայն կը  
շարունակէ ոռնաւ. կը հանձէ գլուխը վեր, երկինք  
բարձրացնելով, սուս սանաօթ ոռնուքը կը սառեցնեն  
Ազամայ եւ Եւայի սրտերը։

Խեղճ կենդանի, տխուր նայուածքով մը բան մը ը-  
սել կ'ուզէ. կը լիզէ անոնց ոսները, գետինը կը հոտոտէ  
հետք կը փիտուէ.

Ազամ ու Եւայ կը հետեւին անոր սարսափով եւ  
շունը զամոնք կը տամի Արէլի արիւնաթաթախ զիակին  
մօտ եւ իւր մահագոյժ ողբը կը շարունակէ, մինչ Ազամ  
ու Եւայ սրտակսկիծ հեծնանքով կը փարին իրենց սի-  
րեցեալ որդւոյն անշունչ մարմնոյն։

Դաշտը ամայի էր եւ տխուր, ոչխարներն խոյս  
տուած էին ոչ մի կենդանի կը գտնուէր խեղճ հովուին  
անշնչացեալ մարմնոյն քով, միայն օձը սուլելով սողոս-  
կեցաւ մորենեաց ներքեւ։

Հեռուն շատ հեռուն մթին ամպերու մէջէն յաւի-  
տենականին ահաւոր ձայնը կ'անիծէր զկայէն։

Ազամ ըսաւ այն ատեն գառնութեամբ.  
Երկու որդի ունէի, երկու որդի զորս այնքան կը  
սիրէի, բայց ահա Արէլ ոչ եւս է. եւ Կայէն անիծեալ  
Աստուծմէ մեղի համար նա ալ ոչ եւս է։

Շունը դազրեցուց ոռնալին, երկչոս կը լիզէր Աղամայ եւ Եւայի ձեռքերը.

Խեղճ Աբելի մարմինը հոն սեւ հողերուն յանձնելէ յետոյ Աղամ ու Եւայ յամբաքայլ դարձան իրենց բնակարանը, շունը անոնց կը հետեւէր քայլ առ քայլ անոնց վշտին վշտակից էր, աչքերը թրջած էին, կարծես կ'արտասուէր : Աղամ կանգ առաւ եւ յուզեալ ձայնիւ յարեց. յաւիտենականը ամէն ինչ մեզմէ առած չէ, ըստ որում մեզի կը թողու մի բարեկամ :

Այսպէս առաջին սուզին շունը կոչուեցաւ բարեկամ մարդուն :

\* \* \*

Կինը ծնաւ երրորդ որդի մը, Աղամ նորածին մանուկը իւր բաղկաց մէջ առնելով փառք առւաւ յաւիտենականին եւ անոր անունը զրաւ Սէթ :

Առաջին մարդուն բնակարանին մէջ մեծ ուրախութիւն կար :

Հաւատարիմ շունը ծերացած էր, այլ եւս ոչ որսի կրնար երթալ եւ ոչ ոչ ոչ անսարներն արածելու առաջնորդել. անոր բոլոր անդամները իրենց նախկին զօրութիւնը կուրուսած էին եւ սակայն զլուխը վեր առաւ եւ հաչեց մեղմիւ, իւր տիրոջ խնդութեան մասնակից էր, իւր աչքերը թրջած էին, կարծես ուրախութենէն կ'արտասուէր . վերջին ճիք մ'ըրաւ, քաշկռուելով մօտեցաւ Աղամին եւ լիզեց մարդուն ոսները .

Աղամ շոյեց շունը, Եւայ գգուեց զայն եւ որբեց իւր ուրախութեան արցունքները, շունը հաչեց կրկին ուզեց ցատկել բայց ինկաւ անշունչ :

Աղամ յուզեալ ձայնիւ ըստաւ Եւային,

Ցաւիտենականը միշտ կը զթայ մեր վրայ, զի նախ պարզեւեց մեզ Սէթը ի միսիթարութիւն եւ յետոյ մեզմէ բաժնեց մեր բարեկամ :

Այսպէս անշնչացաւ մարդուն առաջին բարեկամը :

ՊԱՐՈՒՅՐ

## ԴՐԱՄՈԺԻՏ

Եւրոպական նորածեւութիւններէն՝ մեր մէջ մուտքած ամենէն անաւէրը, զրամօժխաի սովորութիւնն է. որոյ առթիւ, աներեւակայելի չարիքներ տեղի կ'ունենան :

Ունեւոր ընտանեաց համար այնչափ զգալի չեն զրեթէ այս նորամուտ սովորութեան մնաներն, բայց շունեւորի համար, այն աստիճան զզալի են աղէսներն, որ ամրող ընտանեկան կենցաղավարութիւնը խանգարուած է յիշեալ յոսի շահամութեան պատճառաւ :

Գիտնականաց ոմանց՝ «Սիրահարութիւնը, տեսուի մը խելագարութիւն է» ըստանին, այսօր շահու աղքիւր եղած է կարդ մը բաղդախնդիր երիտասարդներու, որոնք՝ ինչպէս կըսին ընդհանրաբար, աղջկան մը օրն ի բուն եւ գիշերն ի լոյս՝ ասեղին ծայրովը վաստկած համեստ մէկ գումարով գործի մը տէր ըլլալու յաւակնութեամբ, կ'ամուսնանան, եւ որ առած ստակնին, քիչ

շատ փայլիւն հարսնիքի մը հազիւ կը բաւէ, որ յետոյ անլրէպ կը յաջորդէ աղքատութիւն ու ձախորդութիւն :

Մեր այս ըստածին իր օրինակ, հետազայ երկու տիկնանց խօսակցութիւնը մէջ բերենք :

— Վույ Ալէմ տուտու աղէկ օր եկար, ես ալ պուլաշիներս նոր լմցուցի տէ, վեր կլամ խախվէ մը խըմեմ ըսի միտկէս, գուոը զարկիր :

— Ժամէն ելան նէ, մէյմը սանկ հանտապիմ ըսի, ընտոր ես, աղէկ ես :

— Փառք Բարերարին, ընտոր ըլլամ, աղէկ գէշ կերթանք կոր :

— Դա՞ անչէ տմա, նոր հարսէդ խօչնի՞դ ես :

— Ա՛խ քուրուկ, անտեղուանքները մի հարցուներ, տունիս տոլիկը քրքրեցաւ :

— Դա ի՞նչ կըսէ . . . ի՞նչո՞ւ :

— Պաշխա պան չեմ ըսեր, հէմէն ուճուտը վերնայ :

— Կամաց ըսէ էֆտիկ հանըմ, կելլայ վերէն կիմանայ :

— Հոս չէ . . . թուրշիները տօլմաները շտկեց, եւ պաղնիք զընաց :

— Դա մինա՞կը :

— Դիմացի էնձին հետ կացին . . . կեցի սա խախվէն վեր հանեմ տէ, ան թրախօմային ինչ կէշ պան ըլւալը, էթրաֆովը քեզի նախկիմ :

— Վախնամ իծծուն օսկին չի տուին :

— Նողէ՛թ ըլլայ բարային, ա՛խ ինչ ըսեմ ես ան զամկիս օր իծծուն օսկիի համար, ասանկ կլոխիկը տէրտի տակ դրաւ :

— Կըսես ամա էֆտիկ հանըմ, իծծուն օսկին ալ քիչ բարա չէ, սանկ էսնափի մը օլտուխճա սէրմայէ մընէ :

— Դա հարսնիքին մասրափին պիլէ չօգտեց, տուն որի՞ն տունը կը հարցունես կոր, հարսիս հար օլանտիսը, ծանըը սոյէն հարսնիք կուզեմ, չալզը կուզեմ ըստա, շաբաթ իրիկուընէ մինչօդ երկուշարթի առտու, չալզըները տէր առաւ նստաւ, ինչո՞վ կըլլայ :

— Հախ ունիս, մեղայ չալզը՞ն ալ ինչ է, ճահիլ ճիւհիւլ թօփի կըլլան, կը զրուցին կը խօրապէն, իշտէ եղաւ կնաց. մնդքը չէ՞ բարային :

— Լուս իշնայ մօրգանդ հոգուն կնիկ, դա տանիք սոյով սօփով խօրափի ալըշմիլ էն եղեր, տուներնին երթաս կայ եւա, տակերնուն կերթայ իւասպար չունին. քուրուկ ան կերուիմ օր, անխտար ախճիկներէ խապար պէրինտէ, տղաս, բարային համար ելաւ աս չըլդիկը առաւ :

— Կըսես ամա քուրուկ, սանկ նայիս նէ, նստուածքը, խորագուածքը չնորհքով, շիտակը նհտուելու ալ ախճիկ չէ կըսէ մարդ :

— Ա՛խ, մենք ալ ատոր խաբուեցանք ես, հարս եղած օրէն պէրի է քի մեղքով քաշեմ կնիկ, օր մը եկած տէ ծառքս պագած չունի, անունս կեսուր պիտի ըլլայ, աշէվիյէն աստին եկած չունիմ. տամլա մը ճուր հորէն չի քաշէր, ծառքը պաղէն տաքը չի խօթէր, սէտիրին քէօչէն կը նստի. անցած օր օտային աւել մը զարկ ըսի տէի, արուններ հոտեցուց տունին մէջը :

— Վայ, մեղքիս . . . ատ ի՞նչ հարսութիւն է :

— Է՛յ իշտէ, աս սանկ է, ալ կրնաս նէ ճուղապ

առուր . . . : Կեցի՛ր նայիմ, հա՛ . անցած զիշեր տղաս ծուկ էր պերէր, զա տէմէթ մը մայտամօզ չի կրցայ ստկել տալու հարս օլաճախիս . ալ ֆէյս տառցաւ պերանս պացի . զա ելլայ ինչ ըսկնէ աղէկ, « ինծի նայէ, ինծի նայէ ըսաւ, ևս իծծուն օսկի նաղտ բերի օր րուհաթ ընեմ, տղադ դուրսը պիտի տատի, դուն ալ տունը . ես համըմի պէս պիտի նստիմ » չըսէ՞ մի . . . :

— Դա՛ վո՛ւյ, էյ նախլը մընէր, հիմայ խելքիս կուզայ :

— Հապա՛, ան անանկ լեզու մը ունի օ՛ր, հեռուներ ըլլայ, ծուղապին ծուղապ տալու չի գար . Ծնունալին էր, ծանրը կոսն փիստան մը շինել տուաւ, շարչայովը ամենական պանովը . Զատկին ալ ամոռվան պարակ կիւմիւշիւ պաղէն փիստան մնալ շինել տուաւ . . . զա, անցած առտու էրկանը էրենիվեր կը պոռայ քի, դուրս ելլալու համար հագնելու փիստան մը չունիմ . . . գէօր օլաճախ կնիկ, Սաշէմ պազիրկեանին մատամա՞ն էիր :

— Աղեկ ալ կըսես, հօրը տունը ի՞նչ կը հագնէր . վախնամ սէքսէն քէսէլիյին ախճիկն էր :

— Կրնաս նէ ատանկ պան մը ըսէ, ավազ, ավազ կը պոռայ քի՝ « Մօրդ հետ մէկ եղաք, իծծուն օսկիս կերաք . . . » մեղքդ քաշեմ քուրուկ, տահա անցած տարի շինած մէրինօզ փիստանովս եմ, ալ բէշէրը բէք բողքուերէր տէ, անցած շաբտու պանեցի վարը վեր ըրի :

— Դա ատոր մէրամը ի՞նչ է, մեղա՛յ . . . իքի տէւլիյէ պիր ոււալու դօյմուշլար :

— Ա՛լ մի հարցուներ, ամեն օր արուն արցունք կը լացունէ, սանկ տղուս վրայ կը նայիմ տէ, սիրաս կտոր կտոր կըլլայ . էրնէ՛կ ան մարերուն օր իրենց զաւկին թրախօմասըզ ախճիկ առեր են :

— Ամեն թրախօմալըները ասանկ կըլլան զայէր :

— Ամա՞ն, Ալէմ տուտու . . . ամենն ալ տեղերնին միան :

— Մըսէր էֆտիկ հանըմ, իշտէ տալոջս հարսը . քսան քէսէ նաղտ, տիրէկ մը տուն, լայըխլըեալ ըռզակ պերաւ, տամնընդինդ օրը անդամ մը չամաշըրի համար դուրսէն կնիկ կը սլերէին, հիմայ ան ալ վերուցին, չամաշըրը հարսը կը վլայ, զայէր ամէնը մէկ կըլլան :

— Զիյտեմ քուրուկ, իմին պէրանս էրեցաւ, ծանըս հասած տեղը պիտի ըսեմ օր տուք դուք էղիք, թրախօմայով հարս մ'առնէք :

— Մտիկ կընէն զայէր, հիմակու էրիկ մարդիկը ծառքերնին քիչ մը բարա ասնի տէ, ինչ կըլլայ ըլլայ, եսքէն կալիքը մտմտացող չինաց . . . ինչ ըսեմ, Ասունած համբերութիւն տայ . մնաս բարով, օր մնալ դուն մեղի հրամմէ :

— Աս շաբառու նայիմ, առամը կտնամ նէ կուգամ . զա առահա աս ատեն կամուս է, նստէ՛ խախվէ մը տահա եփինմ . . . :

Նասըլ կանոխ, Արսէնըս զարատունէն ցորեկուան կերակուրի կուգայ բակուլ մնենեցաւ տաւնէն :

Իրաւ է օր զրամօժիսը ընտանիք կալմելու նողաստաւոր է, բայց մեր մէջ, տյն աստիճանի հասուցին, օր քսան երեսուն սոկի զրամօժիս առնելով ամուսնանալ

սկսան . արդ, քսան երեսուն սոկիով ընտանիք մը կազմեն՝ կարծուածին չափ զիւրին դործ չէ, ուրեմն ինչու համար խեղճ աղջկանց՝ մատներնին ծակծկելով, հաւաքած դոյզն ինչ ստակնին ձեռուընուն կ'առնեն, ու հարսնիք կ'ընենք կոր ըսելով, մէկ երկու օրուան մէջ կը վասնեն . . . չենք գիտեր :

## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Կատաղի ծովը կը սպառնար ընկղմել փոքրիկ առագաստանաւ մը որուն մէջ էր ձերորմն ու իր տղեկը :

Ամենի ալիքներուն դէմ յուսահատ մաքառումէ մը եւքը՝ « Ծնրազրէ՛, տղաս, ըսաւ հայրն » եւ ինքն ալ աշքերը երկինք յառելով :

« Ամա՞ն, Ս. Նիկողոս, գոչեց . այս ահուելի փոթորիկն մեղ աղատես նէ, սա մեծ կայմին չափ մոմ մը պիտի վառեմ քեզի համար :

Հակառակ վտանգին մեծութեան, տղեկը հօրն ուխտած մոմին անհամեմատ խոշորութենէ զարմացած ըսաւ :

« Ատխատար խոշոր մոմ մը շինալու համար, պալմումին ուսկից պիտի գտնենք, հայրիկ . »

— Զդէ՛, պատասխանեց հայրը, մէյմը սա փորձանքէն խալսինք տէ, տասնոց մո՞մը որ տեղին ձեռք չի տար . . . :

Կատակերգութեան մը ներկայացումին մէջ խաղին պահանջման համեմատ, Արլըգէնն իշու ձայնը կը կեղծէր :

Անդիէն հանդիսական մը սկսաւ զուալ անկէ աւելի բնական կերպով մը :

Արլըգէն լոեց՝ ըսելով .

« Ուր որ բնականը կայ, օրինակը աւելորդ է . »

Ամուսնութեան թշնամի մը կ'ըսէր իր բարեկամին . « Կտակս գրեցի : Բոլոր հարստութիւնս կնոջս կը թուզում, պայմանով որ մեռնելէս ետքը, սուզի պայմանամը լրանալուն պէս, ամուսնանայ : Այս կերպով, վըստահ եմ թէ գո՞նէ մարդ մը պիտի ցաւի մահուանս վըրայ :

Մարդ մը իր կինը անհաւատարմութեան մէջ բռնելով զայնը կը հանէ իր հակառակորդին արիւնով մաքրելու համար իր պատուոյն եղած նախատինքը . կինը զարիւրած կը գոչէ :

« Կեցի՛ր, անմիտ, քու զաւկներուդ հայրը կը սպաննես :

Մէկը իր բարեկամը կը ներկայացնէ ուրիշներուն .

« Պարոններ, պատիւ ունիմ ձեղներկայացնելու՝ բարեկամս Պ. Հրանտը . . . , որ երեւցածին չափ ապուշէկը չէ :

Ներկայացեալը կը յաւելու աշխուժիւ .

« Եւ ճիշդ ատ է՝ բարեկամիս եւ իմ մէջ եղած տարբերութիւնը . »

Պարոն մը կը գանդատէր ընդհանուր դատախաղին թէ կրօնաւոր մը զինքը խարեր է :

« Ի՞նչ, ըսաւ հոն ներկայ եղող մը, քու տարիքդ եղող մէկը չի ճանչնար կրօնաւորները : Աշխարհի մէջ չորս բան կայ որոցմէ զգուշանալու է . կոնջ մը դէմքէն, ջորիին ետեւէն, սայլի մը քովէն եւ կրօնաւորի մը ամէն կողմէն :

\* \* \*

Տոքթէօրին մէկը կը հրաւիրուի սիրուն կնոջ մը հիւանդութիւնը դարմաններու :

Հիւանդը կը բանայ իւր ուսերը՝ որոց վայելչութիւնն հիանալի էին :

— Հոս է, ըսաւ կինը ուսերը ցուցընելով, հոս սաստիկ ցաւ մը կայ :

Եսկիւլապի թոռնորդին ձեռնուվը կը զննէ, կը շօշափէ սիրուն կնոջ մարմինը, այսպիսի անստարբերութեամբ որ իր արուեստին մարդոց յատուկ է, եւ կը յանձնարարէ որ ֆանէլայով թէնիքիւր ս'թեօս քսեն, յետոյ լուացարանին քով երթալով, մատներուն վրայ քիչ մը ջուր կը լեցնէ ըստ սովորութեան :

Միւս օրը նորէն կուզայ բժիշկը, եւ գլխարկը հանելէ ետք, կը մօտենայ գեղանի հիւանդին, որ զայրացած կերպարանքով լուացարանը ցոյց կուտայ՝ ըսկով,

— Կ'աղաչեմ սովթէօր ձեռքերնիդ առաջ լուացէք :

\* \* \*

Գիւղական եկեղեցին մը մէջ, քահանան յուղիչ քարող մը կուտայ որմէ զգածուած՝ ամէն ոք կսկսի լալ, ի բաց առեալ զիւղացիէ մը :

Քովինը կը հարցնէ թէ ինչո՞ւ ինքն ալ ուրիշներու պէս չի լար :

— Ես աս զիւղին բնակիչներէն չեմ, կը պատախանէ մարդուկը :

\* \* \*

Պարոն մը թատրոնէն դառնալուն, իրեն հարցուցին թէ ինչ խաղ ներկայացուեցաւ :

— Իրաւ որ, ըսաւ, ներս մատած ատենս այնքան սասաիկ անձրեւ կուզար որ չի կրցայ կարդալ ծանուցումը :

\* \* \*

Ինչո՞ւ Ազամ Եւան դրախտէն վոնտուեցան, կը հարցընէր քահանայ մը պզտիկ լակոտի մը :

— Անշուշտ տան վարձք չվճարելնուն համար, կը պատասխանէ տղեկը, որուն ծնողքը անխիղմ տանտիրոջ մը կողմէ արտաքսուած էին նոյն օրն :

\* \* \*

Կինս ծննդաբերութենէ աղատեցաւ այսօր :

— Մա՞նչ է բերածը :

— Ոչ,

— Ուրեմն աղջիկ է :

— Ինչպէս զիւցար, զեռ մարդու չէի ըսած :

\* \* \*

Հեղինակ մը իր գրքէն նուէր զրկած էր բարեկամի մը, Այս վերջինը զինք տեսնելուն ըսաւ :

— Շնորհակալ եմ ձեր նուէրէն, սիրելի բարեկամ, միայն թէ մոռցեր էիք վրան անունս զրելու :

— Հոս չէ պատասխանեց հեղինակը, ծախելու զիւրութիւն կ'ունենաք :

Մ. Դ.

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Պատրիարք Հայրը Կոնդակաւ մը արտօնած է Գրենական պիտոյից յանձնաժողովը, Գաւառացի աղքատիկ վարժարաններու զպրոցական պէտքին համար հանգանակութիւն կատարելու, ըստ որոշման Քաղաքք. Ժողովոյ :

— Տ. Պետրոս Եպս. Սեբաստիա վերագրածին որբանոց մը բանալու պիտի ձեռնարկէ Ս. Նշանի վանքին մէջ, ուր պիտի պատապարուին թէ քաղաքէն եւ թէ շրջակայներէն բերուած որբերը :

— Երէկ ժամը 10ին տեղի ունեցաւ Բերայի Էսաեան վարժարանի աղջկանց ձեռագործներու վիճակահանութիւնը, ի ներկայութեան բազմաթիւ հանդիսականաց :

— Ս.մեն. Ս. Պատրիարք Հայրը, հինգշաբթի օրը Ուտիկանութեան Դուռը գնաց եւ վաեմ Նախարարին հետառաձին անսակցութիւն մը ունեցաւ :

— Առժամենայ Պատր. Փոխանորդ եւ Խասպիւղի քարոզիչ Տ. Զաւէն Վարդ. Եղիսաբեան զալ շաբթու օդափոխութեան համար Արմաշ պիտի երթայ, եւ տասն եւ հինգ օրի չափ հոն պիտի մնայ :

— Երէկի Մասիսի մէջ հետեւեալ առաջարկը հրամակուած էր :

« Պէրսէրեան էփէնտիի ատենապետութեան ներքեւ զանուող Ուտումն. Խորհրդոյ օրով, խորհրդոյն քարտու զարին ձեռամբ՝ որ ներկայ Ուտումն. Խորհրդոյ ալ քարտուզարն է, վենեսակոյ եւ վիէնայի Միիթարեան, Մահրանութեանց հրատարակութիւններէն, ինչպէս նաև մայրաքաղաքին դրավաճառներէն, հեղինակներէն եւ հրատարակիչներէն երկերկու-երեք երեք օրինակ զասական զրքեր իրեն նմոյշ հաւաքուած են յանուն Ուտումն. Խորհրդոյ, մօտաւորապէս 7—8000 զրուչի. զպրոցներու մէջ գործածուելիք զասագրքերու ընալութիւնն ընելով դասագրոց պաշտօնական ցանկին մէջ անցուելու նպատակաւ :

« Արդեօք կարելի չէ՞ որ այդ գրքիր Մատենադարանի Յանձնաժողովոյ տրամադրութեան ներքեւ դրուին, փոխանակ Պատրիարքարանի մի անկիւնը փոշիներու մէջ ձգուած մնալու : »

ՊԱՄՈՆ

Ծանօթ Խմբ. Կարծենք աւելի նպատակայարմար կ'ըլլայ այդ գասազգքերը Գրենական Յանձնաժողովոյ տրամադրութեան ներքեւ գնել, զրկուելու համար գաւառաց աղքատիկ ուսանողներուն :

Ծանօթ: Ծալիկի. Պատրիարքարանի ցիցերը՝ շատո՞նց զանունք կրծած, կերած, մինչեւ հիմայ հեաքն անզամ թողած չեն :

— Անզրիանուազուայ Արժ. Տ. Արսէն աւագ քահանայ Դերձակեան, հինգշաբթի օրն ներկայացաւ Ս. Պատրիարք հօր:

Նորին արժանապատուած կլիաւոր գործն՝ ուրուն համար յատկապէս Պօլիս նկած է, կը վերաբերի 20 որբերու խնդրոյն որ Անզը. Պօլսոյ աղքատակմամբ նկերութիւնն որդեպի խոսացած էր առկէ առաջ այժմ այս որբերուն համար յատուկ առւն մը պատրաս-

տուած եւ անոնց ուտեստի եւ կրթութեան ծախքն ալ հոգացուած է բոլորովին :

Աղջ. Հիւանդանոցի որբերէն 20 ը պիտի դրկուին Անդր. Պոլիս :

Էտիրնէ ցիներն առաջին եղան այս մեծ բարեգործական ձեռնարկին, որ թէ իրենց եւ թէ առաջնորդական Արժ. Տեղապահին, կարի պատուաբեր է :

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թուրք եւ Յունական պատերազմին մէջ մեռնող Թուրք զինուորներուն եւ որբերուն ինպաստ կազմուած բարեսիրական վաճառահանդէսին շինութիւնը փութով յառաջ կը տարուի : Եէնքը կը բաղկանայ 22 խանութ պարունակող զլիսաւոր տաղաւարէ մը եւ 6 շարժուն սրահներէ : Պիտի ունենայ ճաշարան մը եւ սրճարան մը : Եւ որչափ ատեն որ վաճառահանդէսը տեւէ, այցելուներն աղատ պիտի ըլլան յարակից պարտէզն շրջադայելու :

— Տեղական Թուրք լրագիրք կը հերքեն Նայէ Ֆրայէ Բրէսէ հրատարակութ այն լուր թէ՝ Օսմանեան կառավարութիւնը Գավալայէ 32 վաշտ զօրք դրկած է ի կրեաէ :

— Մեծ Տէրութեանց զեսովանք հինգշաբթի առսուժամ 31/2/ն Աւստրիոյ զեսովանատան մէջ գումարուեցան ի Պէօյիւքտէրէ : Յետոյ Թոփհանէի մէջ գումարուեցան ի ներկայութեան Թէվֆիդ փաշայի :

— Ճէվատ փաշայի համար Նայէ Ֆրայէ Բրէսէ Կ'ըսէ թէ Մեծ Տէրութեանց ծովակալներուն հետ տեսակցեր է Կրետէի ինորոյն վրայ :

— Ապստամբաց կողմէ այս օրերս շփոթութիւն մը հաւանական նկատուելով, ճէվատ փաշտ ու Եւրապական ծովակալք խիստ միջոցներու պիտի դիմեն :

— Սիդիք գտնուող Ֆրանս. զինուորք եւ ուրիշ տեղերու Եւրոպական զինուորք՝ ծովակալաց հրամանաւ Համեա գարձեր եւ միացեր են մեծ զօրանոցը հաստատուած զօրքերուն :

— Բարիզէ կը հեռազրեն թէ քաղաքական խնդիրներու տեսակէտով մեծ կարեւորաւթիւն կը արուի Մ. Հանոթոյի այն տեսակցութեան զօր, Կ. Պոլսոյ դեսպան Մ. Քանազնի եւ Վիէննայի դեսպան Մ. Լոզէի հետ խորհրդակցելէ յետոյ, խորհրդակցեցաւ նաեւ Կոյուխովաքի կումսին հետ :

— Մովային Նախարարն հինգշաբթի օր Թէրունէ երթալով աչքէ անցուց փոքր նոր մարտանաւերու շինութիւնը :

— Ասկէ առաջ մեռնողի մը՝ տուն, գետին կամ կալուածն ժառանգուած փոխանցուած ատեն «ինթիգալ» կալուածին յետնեալ տուրքերն չէր պահանջուէր : Այժմ որոշուած է որ, երբ մարդ մը մեռնի, անոր ստացուածքը ուրիշի պիտի չ'անցնի մասամբ կամ ամբողջովին, մինչեւ որ այդ ստացուածքին յետնեալ տուրքերն վճարուած չըլլան : Այս որոշումը սա սկզբունքին վրայ հիմնուած է թէ, որովհետեւ ժառանցութեան գործուու-

թիւնք կարգադրուած ատեն, մեռնողին բոլոր պարտքերն վճարելի կըլլան, կառավարութեան պահանջքը հարկաւ ուրեց ամեն պահանջքէ աւելի առաջնութիւն ունի :

## ԱՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՈՌՈՒՄԻՆ. — Զարը մասնաւոր հրամանազրով, հետեւեալ դեսպանական տեղափոխութիւնները հրամայած է : Մ. աը Նելիտով մայրաքաղաքէսն նոյն պաշտօնով Հըոմմ կը փոխազրուի, Մ. Զինովիէվ Սթոքոլմէ Կ. Պոլիս, Մ. Պուէցով Թէհրանէ Սթոքոլմ, Մ. Արկիրօբուլով Գարատաղէ Թէհրան մեռնարկին Ս. Պուէցով այցաւուատան Ասիական ճիւղին փոխանորդէն Մ. Կոնֆասովլալ Գարատաղ :

— Էստ տեղեկութեան Եւրոպական լրագրաց, Ճարոն իմացուցած է Միացեալ Նահանգաց կառավարութեան թէ, Հավայի կղզիներուն միացման ձեռնարկին ընդդիմութիւն պիտի ընէ ամէն կերպով, որով այդ երկու կառավարութեանց մէջ կացութիւնը կը ծածրանայ . որովհետեւ Միացեալ Նահանգները այլպիսի սպառնալիքներով ետ չեն կենար. իրենց ձեռնարկէն :

Միւս կողմէ, Միացեալ Նահանգաց Ճարոնի դեսպանը հրամանգանդ է իր կառավարութենէն, որ միշտ խաղաղական զիրք բունէ Հավայի խնդրոյն յարուցած դժուարութեանց հանդէպ :

— Մ. Բեղրսպուրիի քաղաքավետութիւնը վերջին աստիճան զրադեալ է այս օրերս, Մ. Ֆէլիքս Ֆուփ ընդդիմութիւններուն կարգադրութիւններով :

Հաւանականաբար հարիւր միլեօն բուալի պիտի քուէտրկուրի կ'ըսնն, քաղաքին լուսավառութեան եւ այլ հանդէմներու համար :

## ԱՅԼԵՒԱՅԼԵՓ

Այս շաբթու Բիւզանդիոնի մէջ հետեւեալ անկլանելին կարգացինք :

ՎԻԹԽԱՐԻ ԶՐԱՄԲԱՐ ՄԸ. — «Այս ալ Ամերիկայի մէջ : Պոստըն քաղաքն որոշեց ի Քլինդըն շնել վեթխարի ջրամբար մը որ պիտի կրնայ երեք հարիւր միլեաս (.) լիտր ջուր պարունակել՝ տեղւոյն ժողովրդեան եւ գործարանաց պէտքին համար : Զրամբարը պիտի գրաւէ 700 էքտար տարածութիւն : մէկ քանի քիլոմէզը շրջապատ, եւ 48 մէգր խորութիւն պիտի ունենայ : Մինչեւ հիմայ ամենէն մեծ ջրամբարն է Նիւ-Եօրքինն որ 150 միլեօն թոսո ջուր կը պարունակէ, այսինքն նոր շինուելիքին կ'էսին չափ : Պոստընի ջրամբարը քաղաքին 450 հազար բնակչաց առնուազն քառասուն ամիս պիտի կարենայ շարունակ ջուր հայթայթել :

Հաստ մեզ այդ ջրամբարը ջրով լեցուելու համար, զոնէ հինգ վեց տարի անընդհատ եւ յորդառաս պէտք է անձրւէ այդ կողմերն, ապա թէ ոչ Պոստընցիք համբերութեամբ նոր ջրհեղեղի մը սպասելու են, որպէս զի այդ վիթխարի ջրամբարը կարենայ լցուիլ :

\* \* \*

Օդապարիկով զէսի Հիւսիւսային Բնեւեռ ուղեւորող Մ. Անարէի կողմէ արձակուած աղաւնիի մը Շուէտ հասնիլը հրատարակուած էր լրագրաց ոմանց մէջ : Այժմ ուրիշ երեք աղւանիներ ալ բանուեր են այլեւայլ տեղեր, որոնց վրայ թիւեր եւ տառեր գրուած կան եղեր, որմէ կարծուէր է թէ լայնութեան եւ երկայնութեան այն աստիճանները կը ցուցնեն, ուրկէ արձակուած էին Անտրէի կողմէ : Հիմա իմացուեր է թէ բոլոր այդ աղաւնիները կը վերաբերին այն հազար աղաւնիներու խումբին, որ Գերմանիոյ պատերազմական նախարարութեան կողմէ Անդղիայէ Գերմանիա վերադառնալ :

### ՆԿԱՐՆԵՐ

Առջի իրիկուն Բարթիկ աղան իր կնկանը կը հարցունէր :

— Արտէմ հանըմ, գուն ծով մտած առենդ կը լողա՞ս կոր լողալ, ես ինչ որ ըրի, չի կրցայ սորվիլ, միշտ ջուրին տակը կ'երթամ :

— Ես թէ երեսի եւ թէ կոնակի վրայ կը լողամ . . . բան մը չէ, ինքզինքդ ձգէ, սրտիդ վախ մի բերեր, կը սորվիս շուտ մը :

— Ինքզինքս ձգեմ, վախու տեղ ալ չունենամ նէ, քեզի լողալու կե՞րպը կը հարցունիմ :

\* \* \*

Ֆլորիկ հանըմ վազը վարգելառ է, ո՞վ սիտի թըրջնք :

— Առտուն կանուխ ձեզի դամ աէ Միւսիւ Լեւոնը անկողնոյն մէջ աղւոր մը թրջնք :

— Գա անիկայ զաթը ամէն առտու անկողնէն թըրջուած կ'ելլայ :

\*

Դատարանի մը մէջ :

— Ամբաստանեալ, մէջը լեցուն գինիի շիշ մը նետեր ես բարեկամիդ զլիսուն, որ կարելի էր մարգը մեռնէր :

— Կը խոստովանիմ տէր նախագահ, բայց նետած չիշտ տամներկու տարուան զինի էր :

— Տամներկու տարուան ըլլալո՞ . . . :

— Ոհ, բացագանչեց ամբաստանեալը, կենացս մէջ երբէք հին գինիէ վլաս տեսած չեմ :

\* \* \*

Լօնտրայի մէջ, ճէնթըլմէն մը կնոջմէն զատուելու համար զատարանի կը դիմէ, եւ զատավարութեան որ օրն սկսելիքը կը հարցնէ :

Նախարար քիչ մը խորհելէ յետոյ, ամիս մը վերջը կը պատասխանէ :

Ճէնթըլմէնը այս լսելուն, բոլորովին այլայլելով կ'ըսէ :

— Կ'աղաչեմ, տէր նախագահ, սա ամիսը երեք չորս օրի իջեցուր, ապա թէ ոչ, կարելի է որ մինչեւ մէկ ամիս ես կնկանս հետ հաշտուիմ, այն ատեն պարաս տեղը ծախք ըրած սիտի ըլլամ :

### ԾԱՂԻԿԻ ՆՈՐ ԾՐՋԱՆՔ

1. Ծաղիկը կը հրատարակուի խմբագրութեամբ Յ. Մ. Համեան էֆէնսաթի որ պիտի շարունակէ իր ԿՈՐՈՒՄԵԱԼ, ԿՏԱԿ անուն վէպը :

2. Ամէն կանխահոգ միջոցներ ձեռք առնուած են հրատարակութիւնը անընդհատ շարունակելու համար :

3. Պարունակութիւնը պիտի ըլլայ Ազգային, Քաղաքական, Գրական, Գիտական, Կրթական եւայլն :

4. Բաժանորդք, թէ՛ վեցամսեայ եւ թէ՛ տարեկան, իրաւունք պիտի ունենան ձրի ստանալու 100 այցետումս լաւ քարտի վրայ եւ ճաշակաւոր տպագրութեամբ՝ երբ ներկայացնեն Պաղտատլեան Գրատան ընկալագիրը :

5. Անոնք որ կը փափաքին ստանձնել Ծաղիկի Գործակալութիւնը, թող հաճին մեղ իմացնել իրենց հաւանութիւնը : Ամէն Գործակալ որ 5 բաժանորդ կը գտնէ, ձրի կ'ընդունի Ծաղիկի ամբողջ շրջանին թիւերը :

6. Տասը բաժանորդ գտնողը նուէր կը ստանայ Պաղտատլեան հրատարակութիւններէն 40 զրուշի արժէքով դիրք :

7. Ծաղիկի ներկայ շրջանը ո՛ եւ է առնչութիւն չունի նախորդին հետ :

Ուստի, չմնք ստանձներ նախորդ շրջանին բաժանորդներու պահանջները վճարել, եւ անոնք որ կ'ուզնէն նորէն բաժանորդ ըլլալ Ծաղիկին, պարագին ներկայ շրջանի Ա. թիւէն վճարել :

8. Կարծիքի զագաւութիւնը կը յարդուի եւ թերու գրէմ գրուած յօդուածները՝ չափաւորութեան եւ պատշաճութեան սահմանին մէջ կը հրատարակուին անկողնմակալութեամբ :

9. Ծաղիկի անունով եղած ամէն Ընկալագիր, Փոխակադիր, Փոսթայի դրամաթուղթ, Զէք, եւայն վաւերական են միայն Պաղտատլեան Գրատան կնիքը կրելու բացարձակ պայմանով :

10. Գաւառական թղթատարի ծախքը մեր վրայ է :

11. Անոնք որ Գաւառներէն մինչեւ երկու ամիս կանոնաւոր յօդուածներ կը գրեն, իրենց քաղաքին ազգային, կրթական, տնտեսական վիճակին վրայ, կը նկատուին Ծաղիկի թղթակիցները, եւ ձրի կը ստանան թերթը :

12. Հրատարակութեան համար զրկուած ամէն գրութիւն պէտք է թղթին մէկ երեսին վրայ գրուած ըլլայ :

13. Նոր հրատարակուած գրքերէն Յ օրինակ զրկուելով նոյն գրքերուն վերաբերեալ ազգեր եւ իրենց կարեւորութեան համեմատ, նաեւ գրադատական կը գրուի մասնագէտներու կողմէ :

14. Չափաւոր պայմաններով ծանուցումներ ալ կ'ընդունուին :

15. Տեղական կեանքի վերաբերեալ նորավեպ եւ զուարձալիքներ, սրախօսութիւններ, եւայլն լաւագոյն ընդունելութիւն կը գտնեն Ծաղիկի կողմէ եւ ՚ի հարկին կը վճարուին :

# ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ՀԵՂԻՆԱԿ

Յ. Մ. ՀԱՃԵԱՆ

ԳԼՈՒԽ Է.

ՊԱՏՐՈՒԱԾ

— Ես ալ կը ճանչնամ ըսաւ Ռուբէն, Օրթա Զէշմէի սրճարանին մէջ կը սպասաւորէ կարծեմ:

— Նոյն ինքն է, բարեբաղդաբար այս հագուստաներովս զիս չի ճանչցաւ, առա թէ ոչ, երկար բարակ պիտի շաղակրատէր մեզ հետ հիմայ:

— Եկու տես որ եթէ քեզ չի ճանչցաւ, զիս կը ճանչնայ, եւ կարծեմ առիթի մը կը սպասէ մեզ հետ խօսակցութեան սկսելու:

Ցիրաւի ալ Թաղէ Պ. Ռուբէնը ճանչցած էր, եւ որն որ Օրթա Զէշմէի լաւագոյն յաճախորդներէն մին համարած էր զայն, մերի ընդ մերի ընդունած դրամական նուէներէն դատելով, ուստի, երբ առաջնու անդամ պատահմամբ տեսաւ զայն մտովի ըսաւ:

— Են իրաւ որ այս առաւօտ բաղզս բանուկ է, ահաւասիկ պարոն Մանուկը, ծխախոտ ալ ճարեցի, սակայն բանն այն է որ հեղ մը այս կողմը նայի զինքը բարեւելով անշուշտ պատրուակ մը կը գտնամ սիկառ մը խնդրելու:

Բայց Պ. Ռուբէն այս ձեւակերպութեանց հարկ չը թողլով, Թաղէի կողմը զարձաւ ու ըսաւ:

— Բարի լրյո Պ. Թաղէ, ո՞ւր բարով այսպէս:

— Ան ներեցէք Պարոն Մանուկ, զրադեալ ըլլալուս նախապէս ձեզ չտեսայ, Պոլիս կ'երթամ Տէր իմ:

— Միթէ Օրթա Զէշմէի գործդ թողուցի՞ր:

— Ամեններէն, միշտ հոն կ'աշխատիմ:

— Այն ատեն ըսել է որ այսօր արձակուրդ առած ես:

— Ժամանակ չունեցայ մեծաւորէս արձակուրդ առնելու եւ . . . այնչափ աճապարանօք հարկադրուեցայ խանութ թողելու որ ծխատուփս անդամ առնելու մոոցեր իմ:

— Բարեբաղդաբար իմս վրաս է, առէք ըսաւ եւ ծխատուփ Թաղէնին երկարեց:

— Շնորհակալ եմ Տէր իմ ըսաւ ծխատուփը առնելով, եւ սովորականէն իխատ հաստկեկ սիկառ մը պլորեւէ վերջը տուփը եւտ տոււաւ:

— Քանի մը սիկացու առ մէջէն, առաւօտները մի քանի սիկառ կը ծխուի շիտակը:

— Իրաւ որ իրաւունք ունիք, ես չպիտի համարձակէի այդ բանը ինդրել:

— Այս ըսելով տուփին մէջի ծխախոտին երեք մասը առնելէ յետոյ, մնացածը տիրոջը գարձուց:

— Քովլդ գտնուող երիտասարդը աղջականներէ՞ն է:

— Ո՛չ, բարեկամներէս մին այս առաւօտ կանուխ խանութ գալով աղաչեց որ այս տղան Պոլիս գտնուող իւր մէկ աղջականին տանիմ:

Այս միջոցին մենակեացը միջամտելով ցած ձայնիւ ըսաւ:

— Իրաւ որ տարօրինակ բնաւորութիւն ունիս, թող սա շաղակրատը, եւ մեր գործին վրայ խորհինք:

— Խորհելիք ի՞նչ կայ, Տիկին Սարդինէն գտնալով պիտի իմացնենք իրեն որ ինձ հետ պարտի Ռումանիա երթալ որդւոցը հետ միատեղ:

— Ե՞յ լաւ, Պոլսոյ մէջ նշանձի թաղին որ կողմն ըլլալը ես չեմ գիտեր, դու գիտե՞ս:

— Ես ալ չեմ գիտեր, բայց մեր գիտնալուն ի՞նչ հարկ կայ, կամուրջին գլուխէն կառք մը կը վարձենք, եւ կառավարին կ'ըսենք թէ դմեղ նշանձի թաղը ֆըլք-ճ փողոցը տանի, մնացածը դիւրին է:

— Ճիշդ է, նակարավաճախն հարցնելով տունը չուտ կը գտնանք:

— Բնդիակառակը ես այդ մասին շատ կը տարակուամիմ:

Մենակեացը չի պատասխանեց, անորոշ կասկած մը զինքը առջի գիւերուընէ ի վեր անհանգիստ կ'ընէր, թէեւ լինքնին կը խորհէր թէ Օհան, Դաւիթեանցի կտակը կարելի չէր որ կարենայ իւրացընել, քանի որ կտակակատարը նոյն խև Պ. Ռուբէնն էր, սակայն բնազդմամբ կը զդար որ Օհան զինքը պատրած էր, այսու հանդերձ բուլոր այս ենթագրութիւնները կրնային անհիմն ըլլալ ուստի առաջազրեց գործին ելքին սպասել:

Վերջապէս չոգենաւը առաւօտեան ժամը մէկուկէսին կամուրջ հասաւ, Պ. Ռուբէն եւ Մենակեացը աճապարանոք կամուրջ ելան:

Թաղէ որսի բարակի մը պէս՝ որ էրէին հոտը առած է, մենակեացը կը գիտէր քանի մը վայրկին է ի վեր եւ անոր մեկնիլը տեսնելով ինքն իրեն ըսաւ:

— Ես աս ծերուկը անշուշտ տեղ մը տեսած եմ, բայց ո՞ւր արգեօք, նզովից արմատ, այնպիսի դէմք մը ունի որ մարդ կարծէ թէ հինօրեայ ծանօթ մ'է:

— Երթանք պարոն, ըսաւ պատանին, չոգենաւը պարպուեցաւ:

— Իրաւունք ունիս տղաս, երթանք. կէս օրին պէտք է որ Օրթա Զէշմէ գտնուիմ:

Այս ըսելով չոգենաւէն կամուրջ ելան եւ գէպի Ռուկեղիւրի չոգենաւներուն կայարանը ուղղուեցան:

Արդ առ այժմ պահ մը Թաղէն եւ պատանին թողլով, Պ. Ռուբէնին եւ մենակեացին հետեւինք:

Երկու բարեկամներ ճամբան առանց բառ մը փոխանկելու կամուրջը անցնելով Պահճէ Փարուի հրապարակը հասան, մենակեացը անդ կեցող կառապաններէն միոյն մօտենալով ըսաւ:

— Կառապան նշանձի երթալ կուզենք:

— Դումզաբուի՞ նշանձին պիտի երթալ:

— Այս, հոն մըլքը փողոցը պիտի տանիս զմեզ:

— Դլիսուս վրայ, ուրեմն կառք մտէք եւ ճամբայ ելնենք:

— Ինչ պիտի վճարենք:

— Հոն պիտի մնաք թէ ես պիտի դառնաք:

— Ամբողջ օրուան համար կուզենք:

— Լաւ, երեք քսաննոց թուղթ տուէք ամբողջ օրուան համար:

— Ուզածդ պիտի վճարեմ, բայց պէտք է ձիերդ մտրակես :

— Ո՞հ, մտրակի պէտք չունին, մտէք կառքը եւ դուք ինքնին դատեցէք :

Երկու բարեկամները դրսակէն ներս մտան եւ կառքը սրարշաւ ճամբայ ելաւ :

Ռուբէն որ մինչեւ այն ատեն բառ մը անգամ չէր խօսած, առաջին անգամ ըլլալով լոռութիւնը խղելով եւ ձեռքը կիրքայի ծունկին վրայ դնելով ըստաւ :

— Բարեկամ, կէս ժամ չանցած, մեր տարակոյմները պիտի փարատին, եւ այժմէն կը յայտարարեմ թէ Օհանին զմեղ խարած ըլլալուն բոլորովին համոզուած եմ, բայց չկարծէք որ այս գործին մէջ ձեր բռնած ընթացքը կը մեղաղրեմ, ոչ, երէկ գիշերունէ ի վեր բաւական խորհեցայ եւ մեղաղրելի կէտ մը անգամ չգտայ ձեր վրայ :

— Ու վեհանձն բարեկամ, ընդհակառակը եթէ խարուեցանք ատոր միակ պատճառը ես եմ, պէտք էր վերադարձիտ սպասել, բայց եթէ Օհան զիս խարեց, պատոյս վրայ կ'երդնում վրէժդ ես պիտի լուծեմ, ասկէ զատ պիտի աշխատիմ Միքայէլ Դաւիթեանցի ժառանգորդները գտնելով իրենց եղած վասր լիուլի հատուցանել, սակայն գարձեալ կ'ըսեմ, կարելի է որ Օհան ճշմարտութիւնը ըստած ըլլայ մեղ, ես դեռ յոյս ունիմ որ այսօր Դաւիթեանցի այրին պիտի գտնենք :

— Աստուած լսէ ձայնդ ըստաւ Ռուբէն համակերպելով, այս միջոցին կառքը նեղ եւ տղմուտ փողոցի մը մէջ կինալով կառապանը տեղէն վար ցատկեց եւ դռնակէն զլուխը ներս խօթելով հարցուց :

— Պարոնայք ահաւասիկ Ֆըշըճը փողոց հասանք ո՞ր տունը պիտի երթաք :

— Այս փողոցը նալարավաճառ կա՞յ, հարցուց կիրքաւ — Ճիշդ նալարավաճառի խանութին առջեւ կեցած ենք :

— Բաց դռնակը :

— Կառավարը դռնակը բանալով երկու բարեկամներ կառքէն վար իջան եւ ուղղակի նալարավաճառին խանութը մտան որ փողոցին ծայրը կը գտնուէր : Այս անգամ Պ. Ռուբէն խօսքի սկսելով, նոյն միջոցին հոն զըտնուող աշկերտին հարցուց :

— Վարպետդ ո՞ւր է :

— Վերի խուցը կը քնանայ, եթէ բանի մը պէտք ունիք ինձի ըսէք :

— Այս թաղը բնակողները ծանօթ են ձեզ :

— Մէկ տան մէջ քանի մարդ կայ, պղտիկէն մինչեւ մինչին անունը անգամ զիտեմ :

— Այն ատեն կրնա՞ն ըսել մեղ թէ տիկին Սարդինէն որ տունը կը բնակի .

— Տիկին Սարդինէ... էրկանը անունը ի՞նչ է :

— Էրի՛ը մեռած է, Դավինիկ անուն աղջիկ մը եւ Տիրան անուն զաւակ մը ունի :

— Այս թաղը անանկ մարդ չի կայ :

— Կարելի է մէկ տան մը մէջ ուրիշ ընտանիքի հետ կը բնակին եւ գուն տեղեկութիւն ունեցած չըլլաս ըստ կիրքա յուսայամառ :

— Պարոնայք, ամրող թաղը վաթսուն եւ եօթը

տուն կայ, եւ ինչպէս ըսի բնակչաց ամենքն ալ յանուանէ կը ճանչնամ, ձեր ըստ անունով մարդ չկայ, բայց ահաւասիկ թաղին Միթարը Խօրօղ օղլուն կուգայ, եթէ կ'ուզէք անոր ալ հարցուցէք որ համոզուիք :

Ցիրաւի ալ ասուեայ անդրավարտիք եւ վրայէն վերարկու հագած միջահասակ ու նիհար մարդ մը գալով :

— Սթէֆօ ըստաւ, Տէօքմէճին տունէն քաշ մը օճառ կուզին կոր, ըսին որ հիմա տանիս :

— Այս պարոնները մէկը կը հարցնեն... ինչ էր տիկնոջ անունը պարոն :

— Տիկին Սարդինէ այրի, աղջիկը Գալինիկ եւ զաւակը Տիրան, մեզ ըսին թէ Ֆըշըճը փողոցը կը բնակին Խօրօղ օղլու մեր երկու բարեկամները արագ կերպով զննելէ յետոյ ըստաւ :

— Այս կողմերը այդ անուններով ընտանիք չի կայ :

— Սական մեղ հաւաստեր էին որ աստ կը գտնուին ըստաւ կիրքա, այս անգամ զրեթէ յուսասպառ :

— Պարոնայք քսաններկու տարի է որ այս կողմը երեք թաղերու Միթարութիւն կ'ընկմ եւ չի կայ տուն մը որ յարաբերութիւն չունենամ, ուստի երբ կ'ըսեմ թէ այդ անուններով մարդ չի կայ այս կողմերը, կրնաք վատահ ըլլալ Խօրօղ օղլուին... ինձ նայէ Սթէֆօ, օճառ չմոռնաս ըսելով խանութին առջեւէն մեկնեցաւ :

— Վարպետս արթնալուն պէս կը տանիմ պատասխանեց աշկերտը :

Կիրքա եւ Ռուբէն դուրս ելան խանութէն :

— Մի վհատիր բարեկամ, յիշէ որ կատարելիք պարտաւորութիւն մը ունինք, պէտք է զարձեալ Օհանը գտնել, եւ հաւատա որ պիտի գտնենք :

— Են եթէ այս անգամ ձեռք անցընեմ զինքը ըստաւ կիրքա ակռանները կրնակելով...:

— Պիտի գտնանք ըստաւ Ռուբէն, առ այժմ մեկնինք :

Եւ երկու բարեկամներ դարձեալ կառքը մանելով մեկնեցան Ֆըշըճը փողոցէն :

Հիմա ընթերցողնս Ռուբէն կ'ըսէիլիւրի շողենաւներու կայարանը առաջնորդենք, ուր թողած էինք Թադէն Նիքօին հետ :

Շողենաւին մեկնելուն քսան վայրկեան կար, ուստի Թադէն՝ ինչպէս կ'ըսէր ինք, Պ. Յուլսէփէն շորդած ծխախուէն սիկար մը պղորեց ու ուրիշ ծխողէ մը վառելէ յետոյ, նիքօէն զատուելով, գնաց երկու տոմսակ առնելու : Տոմսակավաճառին պատուհանին առջեւ բազմութիւնը խոնած էր ուստի սիփուտեցաւ բազմութեան մէջ սողոսկելով առաջ անցնիլ բազմութեան մէջէն, բայց պատահին թողած տեղը չունելով — ուր թառեր է մեր բգէզը մոլտաց զարմանօք եւ սկսաւ բարձր ձայնով կանչել :

( Շարունակելի )

Տեր Լրագրոյս Ա. ՍԱԲԱՑԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԵԱՆ

( Նախկին ՊԱ.Ա.ՑԱ.ՑԱ.Ն. Ցպարան )

Ա. Պալիս, Սուլբա Համամ 14.